

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԵՃ ԵՂԵՐՆԻ ՍՈՒԳԻՆ ՄԷՋ

Posted on April 20, 2010 by Keghart



Category: [Opinions](#)



Հեղինակ՝ Համո Մոսկոֆեան, Պեյրութ-Վիսպատեն-Ֆրանկֆուրթ, 21 Ապրիլ 2010



Վերջապես, Տեր պիտի կանգնի՞նք մեր միլիոնավոր «կորուսեալ» զաւակներուն՝ մէկ կողմ դնելով բիւզանդական պառակտող վեճերն ու հայրենաքանդ պայքարը:

- «Ե՛ս, Նուրետտին Կեօնտէն, հայ-քրիստոնեայ մկրտուեցայ Հեսսէի հայերու հոգեւոր հովիւ - Սերովբէ Վարդապետին կողմէ: Այժմ Սիմոն կը կոչուիմ, տարօնցի եմ, «Գրզըլ Աղաճ» - Կարմիր խաչ գիւղէն՝ որուն մօտիկ ժայռի վրայ ուխտի կ'երթանք Սուրբ Գեորգ-Խըտըրի Ձիուն սմբակներուն հետքերուն մօտ: Մեր մօտ ծնած է կ'ըսեն՝ Մետրոպ Մաշտոց»:

Հեղինակ՝ Համո Մոսկոֆեան, Պեյրութ-Վիսպատեն-Ֆրանկֆուրթ, 21 Ապրիլ 2010



Վերջապես, Տեր պիտի կանգնի՞նք մեր միլիոնավոր «կորուսեալ» զաւակներուն՝ մէկ կողմ դնելով բիւզանդական պառակտող վեճերն ու հայրենաքանդ պայքարը:

- «Ե՛ս, Նուրետտին Կեօնտէն, հայ-քրիստոնեայ մկրտուեցայ Հեսսէի հայերու հոգեւոր հովիւ - Սերովբէ Վարդապետին կողմէ: Այժմ Սիմոն կը կոչուիմ, տարօնցի եմ, «Գրզըլ Աղաճ» - Կարմիր խաչ գիւղէն՝ որուն մօտիկ ժայռի վրայ ուխտի կ'երթանք Սուրբ Գեորգ-Խըտըրի Ձիուն սմբակներուն հետքերուն մօտ: Մեր մօտ ծնած է կ'ըսեն՝ Մետրոպ Մաշտոց»:

- «Ե՛ս, Ալի «կեաւուր» Իհսան, Ատրեամանէն՝ 15 տարի անցուցած եմ թրքական ֆաշիզմի բանտերուն մէջ՝ դաւանափոխ հայու զաւակ եմ, այժմ ապաստանած եմ Հայաստան, Զիւրտիստանի լեռներուն վրայ վրէժս լուծելով մորթուած իմ պապերու արեան համար»:

- «Ե՛ս, Սասունցի Արմէն, Մուշի մէջ այսօր հազար ընտանիքէ աւելի հայեր կան: Բանտին մէջ քիւրտ ղեկավար Օճալան կոչ ըրած է իր ազգակիցներուն- Գացէ՛ք հայերուն ոտքերն ու ձեռքերը համբուրեցէ՛ք, ներողութիւն խնդրելով ձեր հայրերուն կատարած ոճիրներուն ու կոտորածներուն համար»:

- «Ե՛ս, Էջպէր Եազմուրտերելի, Հրանդ Տիւնիսի հարցուցի թէ, Հայաստանի հայերը քեզի սփիւռքահայ կ'ըսեն: Իրենց բացատրէ ըսի, որ Թուրքիոյ բանտերը 18 տարի իր կեանքը փճացուցած, թատերագիր թուրք ընկերդ կ'ըսէ, որ Արեւմտեան Հայաստանը քո՛ւ հայրենիքդ է»: - «Մենք չե՛նք եկած այս հողերը գալու եւ տանելու, այլ մնալո՛ւ եւ պահպանելու» (Հրանդ Տիւնիսի, «Թիքքո»):

- «Սապիհա Կեօրճէն, բուն անունով խաթուն Սեպիլճեան, եղած է Ուրֆայի որբանոցի սանուհի, այնթապցի, որուն Քէմալ Աթաթիւրք որդեգրած է 1920ականներու սկիզբը, ստացած է բարձրագոյն կրթութիւն եւ դարձած է Թուրքիոյ առաջին կին օդաչուն» -

Հրանդ Տիկրի հարցազրույց-բացայայտումները:

- «Ազգականներս վերջին Համլէն այցելութեանս ժամանակ հարց կու տային թե՛ դարձեալ հայ պիտի ըլլա՞նք» - Ալիս-Ալիյէ Ալթ, պատմաբան, հոգեբան:



Քրտացած Հայեր

Տակաւին կարելի է էջերով վկայութիւններ տալ հայու այն բեկորներուն մասին, որոնք զանազան դիմակներու, դաւանանքներու, գաղափարականներու, անուններու տակ, վերապրեցան հայոց Մեծ Եղեռնը, եւ այսօր, 21րդ դարու շեմին, զանգուածային թէ էլեքտրոնային լրատուութեան միջոցներու ժամանակաշրջանին մէջ, երբ Թուրքիոյ հայաձին նախագահ Ա. Կիլ եւ Արցախահայ նախագահ Ս. Սարգսեան կը մտմտան որոշելու հայ-թրքական յարաբերութիւններու ապագան, երբ ակելի քան 30,000 թուրք լուսաւորեալ մտաւորականներ եւ հանրայայտ անձնաւորութիւններ ներողութիւն կը խնդրեն հայ ժողովուրդէն՝ աննախընթաց կերպով կը նշուի հայոց Մեծ Եղեռնի 95-ամեակը որպէս ազգային վերածնունդի տարի՝ ապա եւ կը շարունակենք Մայր Հայրենիքի թէ Սփիւռքի մէջ, զբաղուիլ բիւզանդական զգուելի վեճերով ու պոռոտախօս յայտարարութիւններով:

Կարծես թէ հայոց ճակատագիրը Լիբանանի, Հայաստանի թէ Ամերիկայի մէջ՝ «ժառանգ» մնացած է հատուածի մը կողմէ, որուն «Աստուածային Շնորհք»ով՝ Մովսէս Մարգարէի նման, «կտակուած» է խելք ու խրատ տալ, թէ հայ ժողովուրդը ի՞նչ պետք է ըսէ կամ ինչպէ՞ս գործէ: Գաւաթ մը ջուրի մէջ բարձրացուած այս փոթորիկները, Երեւանի քաղաքապետի կամ Լիբանանի երեսփոխանական ու վերջերս «վերջ գտած» Կլէնտելի քաղաքապետական ընտրութիւններուն՝ ԱՄՆ: Մինչ, մեր միլիոնաւոր համլէնահայ, «քրտացած», «թրքացած», «արաբացած», Ասորի եւ Չագա դարձած «կորուսեալ» քոյրերն ու եղբայրները, որոնցմէ շատերուն հանդիպած ենք Թուրքիոյ, Սուրիոյ, Գերմանիոյ, Ֆրանսայի, Հոլանտայի, Ամերիկայի եւ անշուշտ, Մայր Հայրենիքի մէջ՝ հարց կու տան բոլորիս - «Ե՞րբ տեր պիտի կանգնիք մեզի, մե՞նք հազարաւոր տարիներէ ի վեր կ'ապրինք պատմական Հայաստանի հողին վրայ»:

Չարմանալի եւ անբացատրելի «Վրիպակով» ու զայրոյթով կարդացիք վերջերս հրատարակուած (Խաչիկ Պապիկեան հրատարակչական հիմնադրամ) Կարէն Հրանտի Խանլարեանի «Հայ Բնակչութեան Եթնկրօնական Վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005 թ.թ.) հոյակապ աշխատութիւնը՝ որուն մէջ, բազմաթիւ մէջբերումներ կան տարիներու ընթացքին «Չարթօնք»ի, «Ազգ»ի, «Դիտակ»ի մէջ գրած նկարագարդ յօդուածներէս՝ նուիրուած դաւանափոխ հայերուն: Այսինքն՝ համա-հայկական շատ կարեւոր հարցի մը մասին, որուն վերաբերեալ, Google համացանցի վրայ, բազմաթիւ լեզուներու (նաեւ թրքերէն) թարգմանուած են վերոյիշեալ յօդուածները, անձնապէս հանդիպած «կորուսեալ» հայերու հետ՝ աշխարհի «չորս ծագերուն»: Սակայն, հեղինակը թէ հրատարակութեան պատրաստողը՝ նոյնիսկ չեն

բարեհաճած յիշել նուաաստիս անունը, նշելով աղբիւրն ու նոյնիսկ էջին թիւը:

Այո՛, կուսակցական չեմ, ոչ ալ կը հաւակնիմ կուսակցական ակնոցով նայիլ այսպիսի կարեւոր հարցին, որ մեր հիւլէական ռումբն է ներկայի թուրք պետութեան քայքայման համար: Թալաաթ թէ Էնվեր, Պեհաւետտին Շաքիր ու Սայետ Հալիմ փաշաներ, նո՛յն յաթաղանով մորթեցին բոլոր կուսակցութիւններու, յայտնի ու գաղտնի կազմակերպութիւններու հայ անդամները, տարագրեցին ու վտարեցին մեր պատմական այն հողերէն, ուր երկու հազարամեակ հիմնեցինք աշխարհի հնագոյն քաղաքակրթութիւններէն մէկը:

